«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի ժ/պ,
Տնտեսագիտության թեկնածու

Լ.Ն.Սարգսյան
27 ապրիլի 2022թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Վահագն Լիպարիտի Տեփոյանի «Ֆինանսական կայունության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ,* Տիգրան Հարությունյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ,* Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Սվետլանա Դալլաքյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Լիլիթ Սարգսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Տաթևիկ Փարսադանյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից է ֆինանսական համակարգի կայունության և հուսալիության ապահովումը: Պետությունը ֆինանսական ինստիտուտների կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար պետք է ձևավորի անհրաժեշտ պայմաններ: ՀՀ-ում այն

իրագործվում է Կենտրոնական բանկի կողմից: Ֆինանսական կայունության և հուսալիության գնահատման նպատակով անհարաժշտ է կիրառել ցուցանիշների ամբողություն, որն հնարավորություն է տալիս այն ներկայացնել ավելի ամբողջական և համակարգված: Նման ցուցանիշների հետազոտմամբ պայմանավորված է ներկայացված ատենախոսության արդիականությունը: Իրականացված հետազոտությունը նվիրված է նշված հիմնախնդիրների ուսումնասիրությանն ու դրանց լուծման ուղիների նախանշմանը, ինչով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունն ու հրատապությունը: Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է գնահատել ՀՀ Ֆինանսական և ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների կայունության մակարդակը, ինչպես նաև վեր հանել արդյունավետության բարձրացմանը նպաստող առաջարկություններ և միջոցառումներ:

ՀՀ Ֆինանսական և ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների կայունության ապահովման համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ Ուսումնասիրել ֆինանսական կայունության հասկացութային ապարատը;
- ✓ Համակողմանի վերլուծել ֆինանսական կայունությունը բնութագրող հիմնական ցուցանիշները և գնահատել հայրենական և միջազգային փորձը՝ համադրելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից որդեգրած մոտեցման, ֆինանսական կայունության հնարավոր ռիսկերի դիտարկման և հակազդեցության միջոցառումներին;
- ✓ Կառուցել ֆինանսական կայունության ներառական ֆինանսատնտեսական ինդեքս, որը կբացահայտի ՀՀ Ֆինանսական և ոչ ֆինանսական առևտրային

կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ազդող ֆինանսական, իրական, պետական և արտաքին հատվածի գործոնները և թույլ կտա կանխորոշել մոտալուտ ճգնաժամերը և կազմակերպությունների սնանկացման պատճառները:

- ✓ Կառուցել մակրոտնտեսական ցուցանիշներից բաղկացած մեթոդական մոտեցում, որը գործոնային վերլուծության կիրառմամբ թույլ կտա հասկանալ և գնահատել ֆինանսական ցուցանիշների՝ տնտեսության ամփոփ ցուցանիշների վրա ազդեցությունը, փոխկապվածությունը և կլինի ներկայացուցչական;
- ✓ Մատնանշել վերջին տարիներին նշանակալի տնտեսական ճգնաժամերի ընթացքում (2008-2009 թթ, 2014 տարեվերջ-2016, 2020-2021 թթ.) ՀՀ մակրոտնտեսական միջավայրը, տնտեսության տարբեր ինդիկատորների դինամիկան և օրինաչափությունները;
- ✓ Առաջարկել ՀՀ–ում հակաճգնաժամային կառավարման արդյունավետ միջոցառումներ՝է վերլուծելով ՀՀ կառավարության կողմից փաստացի ձեռնարկված քայլաշարերը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության ընթացքում ստացվել են գիտագործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

1. Միջազգային փորձի հիման վրա կառուցվել է ֆինանսական համակարգի այնպիսի ցուցիչներից բաղկացած մեթոդական մոտեցում, որը թույլ է տալիս հասկանալ և չափելի դարձնել տնտեսության ամփոփ ցուցանիշների վրա ազդեցությունը և փոխկապվածությունը;
2. Միջազգային փորձի հիման վրա կատարվել են տնտեսական ռիսկերի կանխատեսում և ֆինանսական կայունության ապահովման գործիքակազմի կատարելագործում միկրոմակարդակում և մակրոմակարդակում՝ կառուցելով ֆինանսական կայունությունը ներկայացնող ֆինանսատնտեսական ինդեքս;

3. Գնահատվել և ներկայացվել են այն միջոցառումները և գործիքակազմը, որոնք ՀՀ Կառավարությունը և Կենտրոնական բանկը կարող են ձեռնարկել ճգնաժամերի առաջացման դեպքում՝ դրանց զարգացումը կանխելու և արդյունավետ հակազդելու համար;
4. Իրականացվել են ՀՀ առևտրային կազմակերպությունների՝ ֆինանսական կայունության վրա ազդող գործոնների գնահատում այն հիմնական վիճակագրորեն նշանակալի փոփոխականների բացահայտմամբ, որոնք էապես կանխորոշում են կազմակերպությունների սնանկացումը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը հեղինակին թույլ է տվել ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Ատենախոսության առաջին՝ «Ֆինանսական կայունությունը և դրա գնահատման տեսամեթոդաբանական սկզբունքները» վերտառությամբ գլխում ներկայացված է

ֆինանսական կայունության բնութագրման հասկացութային ապարատը, ֆինանսական կայունության վրա ազդող գործոնները, ֆինանսական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունները, ինչպես նաև ուսումնասիրված են ֆինանսական կայունության գնահատման սկզբունքները:

Ատենախոսության երկրորդ՝ «Դրամավարկային քաղաքականության իրականացման և ֆինանսական հոսքերի կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ գլխում հեղինակի կողմից ներկայացվել են ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների փոխառնչությունները, ինչպես նաև ճգնաժամային ռիսկերն ու ֆինանսական համակարգի կառավարումը:

Ատենախոսության երրորդ՝ «Տնտեսության հակաճգնաժամային կառավարման և ֆինանսական կայունության ապահովման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ գլխում գնահատված է ֆինանսական կայունության վրա ֆինանսատնտեսական ցուցանիշների և համաթվերի փախկապակցվածության ազդեցությունը, ներկայացված են Հայաստանում տնտեսական ռիսկերի կանխատեսման և ֆինանսական կայունության ապահովման գործիքակազմի կատարելագործման ուղիներ, ինչպես նաև հեղինակի կողմից մշակվել են հակաճգնաժամային կառավարման միջացառումներ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրակացություններ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Աշխատանքի 10-րդ էջում ներկայացված գծապատկեր 1–ում հեղինակը ֆինանսական կայունությունը բնութագրող ցուցանիշների շարքին է դասել եկամուտների և ծախսերի հավասարակշռությունը, որը ֆինանսական կայունությունը բնութագրող ցուցանիշ չէ: Որպես ֆինանսական կայունությունը բնութագրող ցուցանիշ, մեր կարծիքով, ավելի նպատակահարմար կլիներ ներկայացնել եկամուտների գերազանցումը ծախսերին:

2. Հեղինակի կողմից Աղյուսակ 2–ի միջոցով ներկայացվել է ֆինանսական կայունության վերաբերյալ տարբեր հեղինակների բնորոշումները, սակայն այստեղ բացակայում են մակրո և միկրոմակարդակով ֆինանսական կայնություն հետ կապված հայ հետազոտողների բնութագրումները:

3. Աշխատանքի 94-րդ էջում ներկայացվել է բարձր իրացվելի ակտիվի բնութագրումը միայն ժամանակի գործոնով, որը, մեր կարծիքով, թերի է:

4. Աշխատանքն էլ ավելի կշահեր, եթե իրական հատվածում սնանկացման հավանականությունը գնահատելու նպատակով աշխատանքում ներկայացվեր վերլուծություն ըստ ճյուղի, հաշվի առնելով վերլուծվող օբյեկտների նմանությունները հաշվառման քաղաքականության և այլ գործոնների մասով:

5. Իրական հատվածում վերլուծության ժամանակ դիտարկվող երկրորդ ցուցանիշը կապիտալի շահութաբերություն է, սակայն հեղինակի կողմից ներկայացված բանաձևով կապիտալի շահութաբերություն չի հաշվարկվում (էջ 112):

6. Ատենախոսությունում առկա են բազմաթիվ տեխնիկական թերություններ, մասնավորապես. աշխատանքի 13-րդ էջում հղումները պատշաճ ձևով չեն ներկայացված, աշխատանքի 23-25-րդ էջերում ներկայացված աղյուսակային տվյալները անհրաժեշտ էր վերլուծել՝ նշելով դրանց աղբյուրը, աշխատանքում առկա են կրկնվող պարբերություններ, մասնավորապես՝ էջ 28-ում և էջ 3-ում ֆինանսական կայունության ներկայացված բնութագրումը, էջ 31-ում և էջ 3–ում ներկայացված ֆինանսական կայունության գնահատման համար հնարավոր ռիսկերի խմբավորման հինգ աղբյուրները և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վահագն Լիպարիտի Տեփոյանի «Ֆինանսական կայունության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը ներկայանում է որպես ամբողջական, ավարտուն և օգտակար հետազոտություն, որում վեր են հանվել ՀՀ Ֆինանսական և ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների կայունության ապահովման արդյունավետության բարձրացմանը նպաստող առաջարկություններ և միջոցառումներ: Աշխատանքում տեղ գտած թերությունները էապես չեն ազդում աշխատանքի գիտական արժեքի վրա:

Հեղինակի գիտագործնական ընդհանրացումները, եզրակացությունները և առաջարկները նոր խոսք են և շոշափելի ներդրում Հայաստանի Հանրապետությունում Ֆինանսական և ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովման գործում:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 6 գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Այսպիսով՝ Վահագն Լիպարիտի Տեփոյանի «Ֆինանսական կայունության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 6 հոդվածների հրապարակումները բավարարում են ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (27.04.2022թ., արձանագրություն թիվ 10):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու **Գ.Մանուկյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու **Ե.Հակոբյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու Գ.Մանուկյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու Ե.Հակոբյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ք. Յու. Բաղդասարյան**

«27» ապրիլի, 2022թ.

Կ. Տ.